

ՄՇԱԿ

Հարկան գինը 10 րուբլի, կէս տարվանը 6 րուբլի
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ.

Խիբ հասցէն. Тифлисъ. Редакция «Мшакъ».

Կամ Tiflis. Rédaction «Mschak».

ՏԵԼԵՔՈՆ № 253.

Կապարարութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ

(բացի կիրակի և առն օրերից)

Հայտարարութիւնը ընդունվում է ամեն լիզումով.

Հայտարարութիւնները համար վճարում են

կոպէկով քառասուն 2 կոպէկով.

ՏԵԼԵՔՈՆ № 253.

ԲՈՎԱՆԻՍԱԿՈՒԹՅՈՒՆ

Ոչնչացող սերունդ. Անհողի վարչութիւն.
— Ներքին ՏԵՍՏԱՌԻԿՆԵՐ. Գալիկի և ոչխարներ.
Նամակ բազուկից. Նամակ բազուկից. Ներքին
տարած. — ԱՐՏԱՌԻԿՆԵՐ. ՏԵՍՏԱՌԻԿՆԵՐ. Վերջին տե-
ղեկութիւններ. Վարչական տեղեկութիւններ. Նա-
մակ Պարսկաստանից. Արաբական տեղեկութիւններ. — ԲՈՐՏԱՌ. — ՏԱՅՏԱՌԱՌ.
ԲՈՐՏԱՌ. — ԲԱՆԱՌԱՌԱՌԱՌ. Կերպեր փոխ-
վել են.

ՈՉՆԱՅՈՒՆՈՒՆ

II

Մենք ասացինք որ հայ որբերի դու-
րանք ստակալի կը մնայ, եթէ և երբեք
մարդասիրութեան հասցրած օգնութիւնը
թեան չը միանայ տեղական օգնութիւնը:
Բայց ի՞նչպէս հասկանալ տեղական օգնու-
թիւնը, ի՞նչ որոշ սահմաններ մէջ պէտք
է դնել պահանջը:

Խօսել այս օրակին Թիբլիսի հայա-
բնակ գաւառներին մասին այն մտքով, թէ
որանք կարող են պարտաւարութիւններ
կատարել, կը լինի անխելութիւն: Կա-
ռուները դարեւնի ի վեր հարստահար-
վում են, իսկ այժմ ներկայացնում են
կատարելաւ մոռացութեան մատնված աւե-
րակներ, որոնց վրա բռնացած է սպանա-
ցի սարսափը: Իսկ եթէ դեռ կան տեղեր,
որոնց խնայել է իսկապէս բարեարարութիւնը,
դրանք նոյն թշուառ, անօգնական և խա-
ւար անկեղծներն են, որոնք կիսամեռ
գործիքներն մէջ էին գտնվում նոյն իսկ
վերջին երեք տարիների արհաւիրքներից
առաջ: Երբեք գաւառները չեն ազատվել
աղիտութեան թանձր խառնուրդից, երբեք
այնտեղ չէ հաստատվել դիտակցական
գործունէութեան, տեղական շահերի ան-
կախ զարգացման և առաջադէմ շարժման
ինքնիշխանութիւնը: Այժմ Պոլսի հայոց հասարա-
կութիւնը, որի ձեռքում էին նախկին
միջոցները, գիտութիւնը, եւրօպական կար-
գիւրը, սահմանադրութիւնը, ազդեցութիւնը

և իշխանութիւնը, երբեք չը մտածեց գա-
ւառների մասին, այլ ընդհանրապէս խեղ
նրանց իրաւունքները, որպէս զի իբրեւ ամ-
բողջ ժողովրդի ներկայացուցիչ փայլեցնե-
լի պարլամենտական հանձնարձակ գործի
փողով նիստերի ժամանակ: Կ. Պոլսի
կառնում էր գաւառների բոլոր շահերը և
իր մէջքի ետեւում ծածկում էր գաւառա-
կան ահագին ազդեցականութիւնը:

Այժմ էլ թիբլիսացի մայրաքաղաքի հայ
կոյտի մասին ներկայացնում է նոյն դրութիւ-
նը: Զիչէ է, նա էլ կոտորածների բռն գա-
ռաւ, բայց ո՞ւր չէ յայտնի որ Կ. Պոլսի
փողոցներում ջարդված բազմութեան ա-
հագին մեծամասնութիւնը հայաբնակ
հայեր էին: Եւ այժմ էլ մի ընդհանուր
անհարկ գցելով Թիբլիսի վրա, մենք կը
տեսնենք համատարած աւերակների մէջ
գարձաւ միայն Կ. Պոլսի հայ կոյտի մասին,
որ անհամարժեք իրաւունքները գրութեան մէջ
է գտնվում: Այդտեղ են էֆէնդիները, հայ
հարուստ բանկիրները, վաճառականները,
այդտեղ խմբված է այն գասը, որ միշտ
թիբլիսացիների պաշտօնական ներկայացու-
ցիչ է համարվել, որ ունի խօսքը, գոր-
ծիւն ազատութիւն:

Պարզ է, որեւէ, որ տեղական օգնութեան
ամբողջ ինքնիշխանութիւնը, ամբողջ պարտա-
կանութիւնը ընկած է Կ. Պոլսի հայերի վրա:
Մենք ասացինք որ նրանք խօսում են հայ
որբերի մասին, գրում, մտածում են, պաշ-
տօնական լիզում են յորիսում: Բայց ի՞նչ
կարելի է սպասել այդ բարի ցանկութիւն-
ներից: Մեր այս հարցին կարող է պա-
տասխանել այն գրութիւնը, որի մէջ գտնու-
վում է Կ. Պոլսի հայ հասարակութիւնը:

Այժմեան ժամանակ նա ներկայացնում
է նոյն խաղաղ և անվրդով ծահիճը, որ
գոյութիւն ունէր մինչև վաթսուական
թուականների շարժումը: Տիրում է էֆէն-
դիական բռնապետութիւնը, հայ տեղա-
ւորների, արքունական կապալներով հա-

րստացած վաճառականների խնամակալու-
թիւնը: Վերջին տարիների փոթորիկները
քշեցին, հեռացրին Բաթումի ավերից բուն
ժողովրդական, առաջադէմ տարրերը, ո-
րոնք զիմարում էին փողի և աստիճան-
ների վրա յիշված դասակարգին և արդէն
վաճառել էին նրան ազգային բոլոր պաշ-
տօններից: Այդ նոր, թարմացող հասան-
քը շատ շուտ կույր դեռաց քաղաքական ա-
հագոր հորձանքների մէջ, և այժմ Կ. Պոլ-
սի հայերի հասարակական և գրական
գործերում նորից տիրել են այն կարգերը,
որոնց նկարագրել է երգիծաբան Պարո-
նեան: Լրագրութիւնը ամենադժուրին դը-
րութեան մէջ է: Եւ այժմ էլ տալիս միայն
շողջորթիկ իշխանութիւններին, ազգային
վարչութիւնների գլուխն են անցել մար-
դիկ, որոնք ոչ կարողութիւն և ոչ ցան-
կութիւն ունեն գործելու, բայց որոնք սո-
վոր են մեծամեծ պատիւներ պահանջ-
ել իրանց «վեհապետ» անձերի համար,
կրկնելով հին ավերակական այն առասպե-
լը թէ իրանք իրանց «վեհապետ» գոյու-
թեամբ արդէն ազգի համար կատարեալ
բարօրութիւն են: Այդ ոտով գլխով ան-
պէտք մարդկանց ազգային պաշտօնների
շուրջը հասարակ է սարսափը, որ պետա-
կան տերրորի հետեւներն է և պապանձե-
ցրել է այն բոլոր լեզուները, որոնք կարող
են խօսել և հասկանալ: Ամեն ինչ թմրած
է մի պատրիարք, որ իր գործունէութիւնը
սկսեց մի շարք պերճ ու շքեղ ուղեւոր-
ւում ու ապա լուեց և անշարժացաւ:

Մի այսպիսի տափալ, ծղլ է անտար-
բեր շրջանի առաջ գրված է այն ահեղ
կատար, թէ տասնեակ հազարներով որբեր
են մնացել անխնամ, մեկը, մահվան մատն-
ված: Ի՞նչ տեսակ գործունէութիւն կա-
րող է առաջացնել այդ ահեղ իրականու-
թիւնը, ի՞նչ տեսակ գաղափար և ծրագիր
կարող է նա ծնեցնել:

Լրագրիները անդադար խօսում են որբե-
րի մասին, պատրիարքարանը շրջաբերա-
կաններ է ուղարկում, յորդորում է մայրա-
քաղաքի հարուստներին մի մի որբ որ-
գեցրել: Իսկ մէջտեղ գործ չը կայ, կար-
ծես խնդիր հարկեր, երկու հարկեր, նոյն
իսկ հազար խեղճերի մասին է. կարծես
կարելի է ցամաքեցնել թշուառութեան
ծովը մի 100 կամ 200 հայ որբեր բե-
րել տալով Կ. Պոլսի և տեղաւորելով նրանց
կամ մասնաւոր տներում, կամ ազգային
հիւանդանոցում: Այս հին, նահապետա-
կան ձեռք է Կ. Պոլսի կատարում իր պար-
տականութիւնը. այս ողորմելի ձեռնարկու-
թեամբ է պատրիարքարանը կամեում
պարգևատրելու գառնաւ: Առանց պատրաստու-
թիւնների, առանց դիտակցելի, լոկ սրան
ու նրան խնդրելով և լրագրիների մէջ դա-
տարի ազունի հանելով Կ. Պոլսի հայերը
ենթադրում են թէ հարկեր հազար որ-
բերին օգնութիւն արած կը լինեն: Սա
միամտութիւն չէ, այլ բացարձակ աչքախ-
պութիւն: Այսպիսի մէջ ո՞վ է տեսել որ
ահալի թշուառութիւնը փերանց առանց
մատ մատ խիլելու, առանց գիտարու-
թիւնների, առանց քրտինքի, ամենախնե-
րի և յամառ ու անդուլ աշխատութիւննե-
րի: Կ. Պոլսի էֆէնդիական ազդեցաւ կլի-
կը գտնէ այսպիսի մի ծանր և տաղանդա-
լից ժամանակ չէ կարողանում ցոյց տալ
լուսաւորված աշխարհին, որ իր ազգին մի
փոքրիկ օգնութիւն անելու համար նա
սիրտ կանի երբ և ինչ շարժել իր ուղեղն
ու գրպանը:

Գտնէ օրինակ վերցնելիս եւրօպայիցից.
գտնէ սովորելիս հիմնարկութիւններ հաս-
տատուելու, ժողովարարութիւններ անելու
եղանակը: Տեսնել թէ ինչպէս են վերա-
բերվում եւրօպայի մարդասէրների գործին:

ԲԱՆԱՌԱՌԱՌԱՌ

ԳԵՐԵՐԸ ՓՈՒՎԵԼ ԵՆ

Տասն և իններորդ դարի ընթացքում ոչ մի
պետութիւն այնքան ստատիկ կերպով չէ յարու-
ցել ամբողջ քաղաքակրթ յայտնաբերող
դպրոցներ, որոնք, բոլորը, իր անօրինակ
հարստահարութիւնների, անարդարութիւնների,
մարդկային ամենատարրական և նուիրական ի-
րաւունքների բռնաբարութեան համար, որքան
Թիբլիսի: Եւ նա, Թիբլիսի, ինքն չառ լաւ
զգացել է այդ դպրոցի և բողոքի արդարու-
թեանը և ընկճված նրա ծանրութեան ներ-
քոյ, աշխատել է ամեն կերպ ուրանալ, հերքել
փաստերը, ծածկել ճշմարտութիւնը և երբեք չէ
համարձակվել գլուխ բարձրացնել, խրոխտաբար
խօսել, և կոչում անել արդարութեան և քաղա-
քակրթութեան:

Եւ սակայն, այսօր դերերը փոխվել են. այ-
սօր, նախատիքի, արհամարհանքի, սարսափելի
յանդանքների պատասխանատուութեան տակ
ընկճված Թիբլիսի սկսել է մի այնպիսի լեզու
գործածել քաղաքակրթ, բրիտանական աշխարհի
վերաբերմամբ, որ մարդ միայն կարող է ապ-
շել: Թիբլիսի խօսում է արդարութեան, ճշ-
մարտութեան անունով, մեղադրում է Եւրօպա-
կան անարդարութեան, հարստահարութեան մէջ,
ծաղրում է բրիտանական լուսաւորութիւնը և
իրան ներկայացնում է իբրեւ առաջնութեան
և արդարադատութեան իշխան:

Եւ այդ այն պատճառով, որ նա կարողացել
է մի աննշան յաղթութիւն տանել փոքրիկ Յու-

նաստանի վրա, այն էլ գերմանական գործի
աջակցութեամբ: Նա մտածել է միանգամայն
այն ոճադրութիւնները, որոնք մէջ դեռ և-
րէկ մեղադրվում էր, որի հարկեր հազարաւոր
անմեղ գոհներն, որոնց արեւը թափեց և արդէն
ապահով, թէ անպատիւ է մնալու՝ իր այդ ոճա-
դրութիւնները հաշվում է իբրեւ հերոսու-
թիւն:

Չայրացած, որ եւրօպական մեծ պետութիւն-
ները միջամտում են և թող չեն տալիս Յու-
նաստանի էլ ենթարկել նոյն վիճակին, որին
նա ենթարկեց Հայաստանը, թիբլիսացի կառա-
վարութիւնը, կիսապաշտօնական «L'Orient» լը-
րագրի միջոցով, ահա ինչ արտաբերաւ յայտա-
բարութիւն է անում:

Եւրօպական պետութիւնները իբրեւ պատե-
րադական տուգանք առաջարկում են մի ա-
մենաչափ թանջան, ոչ մի կատար հող չեն դի-
ջում, ոչ մի երաշխաւորութիւն, նոյն իսկ թող
չեն տալիս ժամանակաւորապէս գրաւել երկիրը
մինչև տուգանքի վճարումը: Ահա ինչպէս է
վարվում Թիբլիսիայի հետ միջուրդ Եւրօպան.
ահա ինչպէս է նա հասկանում իր համարխա-
րան միջոցներ, իր միջամտութիւնը, իրաւունք
յարգելը, արդարադատութիւնը XIX դարի վեր-
ջում, քաղաքակրթութեան և բրիտանական
անունով: Թիբլիսի իր յաղթութիւններով փը-
կեց Եւրօպան համաձայն հրդեհի բռնկումից,
որի հետեւները ոչ ոք չէր կարող գաւազել
նոյն իսկ հեռուից: Թիբլիսի ամեն րօպէ Եւ-
րօպային ահագին ծառայութիւն է մատուցանում,
ապահովեցնելով նրա խաղաղութիւնը հեռա-
նկով նրանից ապագայ յարձակումները: Եւ ահա
ինչ վարձատրութիւն է ստանում. հերքվում է
ամեն արդարադատութիւն և ամեն իրաւունք,

հենց որ գործը վերաբերում է Թիբլիսիային: Ինչպի-
սի ունենալով քաղաքակրթ Եւրօպային անարժան
այդ վիճակը, անչափ, Թիբլիսիային այլ ևս ոչինչ
չէ մնում անել, եթէ ոչ արեւ ճանաչողարժով ա-
պահովել իր համար այն օգուտները, որոնց վրա
նա իրաւունք ունի և որը մեծութեւն են նրան:
Նա գտնվում է Թիբլիսիայում իր գործով, իր
վարչութեամբ, երկրի եկամուտի աղբիւրները իր
ձեռքումն են. թող նա մնայ այդտեղ մինչև
բաւարարութիւն ստանալը: Եւրօպական կոնցէրտը
չէ, որ կարողանայ ստիպել նրան դուրս գալ
այդտեղից:

Այս տարին ցոյց տուեց աշխարհին օսմա-
նեան կայսրութեան փառաւոր (sic) վերածնու-
թիւնը: Բայց կատարեալ յաղթանակի համար
պէտք է դեռ տուտիւն աշխատութիւն, որը
սուլթանը կարող կը լինի գլուխ բերել: Թիբ-
լիսի համարում էին յափտեան մեռած: Սուլթ-
անների, Պաշկէվիչների, Սկոբէլեւների թիբլի-
տակ, բայց մեծ Ամէլիի նման, նա գործիւն
է ստանում նոյն իսկ պարտութիւնից: Նրա եր-
կիրը մասնեցին հայ աւազակախմբերին, բայց
անընդհանր ժողովուրդը վերջ գրեց այդ աւա-
զակների աւարադուլութիւններին: Վերջապէս, իբրեւ
վերջին նախազգուշացում, նրան չըբացատեցին
մի շարք երկրորդական պետութիւններով և ահա,
զուրա դալով իր թմրութիւնից, նա նորից տըն-
կում է օսմանիւնների զրօշկը (sic) կորցրած
նահանգներում: Օսմանեան կայսրութիւնը դարձ-
նեց իր լեքաբիական և մահաբեր բնից. նա
զարկեց Արդուլ Համիդի ձայնից և յաղթանա-
կեց: Թաղաքներ ստիպվեց պատերազմ մղել վե-
րականցնելու համար խաղաղութիւնը, որ խախտ-
վել էր մեծ պետութիւնների փառապիւրութեան
պատճառով: Իր գործը լրացնելու համար նա

պէտք է ջարդէր Յունաստանը, որպէս զի չորաց-
նի մակեդոնական խռովութիւնների աղբիւրը:

Բայց դեռ կայ մի երկիր, որ խռովութիւն-
ներ է սերնդաւորում կայսրութեան մէջ. դա բոլ-
գարական իշխանութիւնն է: Ամեն օր ծառան
ստում է Կարսին. «Արեւիկ», յիշի ավերակներնե-
րին: Մենք, մենք ևս կրկնում ենք օսմանեան
վեհապետին. «Սուլթան», յիշի Բաղդադիւն. վե-
րականցնել յիշուցութեանը մէջ Արեւելեան Բաճ-
լիսան, որ կապիւս այժմ խել են քա օրէնքի տա-
կեց, այն գիւղերը, որ բաղադրական դօրքը դի-
նաւախով օդն է հանել և Մակեդոնիան, որ հե-
ղեղված է արեւում Սօֆիայի և Տիբլիսիի սլա-
ւեան կոմիտէաների աւազակախմբերի ձեռնադի-
շանք է օրը, երբ խաղիվել պէտք է գործի,
բաղադրւում առաջ խառնատալով իր զինուորներին
և առաջնորդելով իր նիզամները նուաճելու հա-
մար այն նահանգները, որ բուն և անարդար
կերպով խել են նրա գալիսունից: Ժամանակ է,
ժամանակ, որովհետեւ ուխտադրութ Բաղա-
դիսան, զրգվելով Անգլիայից, դաւաճանում է իր
պարտաւարութիւններին և իր ապագային աղի-
տացիայով, իր գրեւորութեանով ու պահանջնե-
րով: Եւրօպայի փոքրիկ պէտք է բե-
րի իր զինին: Եւր Բալկանեան պետութիւննե-
րը յաւանական պատերազմով սկզբում խոտա-
ցան պահանջնեւ չեղորութիւն, Արդուլ-Համիդը
կարող էր ամէկ մտածելով Բաղդադիայի մա-
նին. ճամն ամեն ստում ևս ձեւ, ձեւանից մէկը
կը մասնի ինձ:

Ահա, բացականչում է «Новости» լրագիրը,
ինչ լեզուով է խօսում Թիբլիսի բրիտանական
աշխարհի հետ:

Ա.

Շիրակի ԲԱԳՅԱՆՈՒԹԻՒՆՈՐ գեղդից մեկ գրում
 Կ. Վրյանտոյի ման կարգադրութեամբ, Շիրակ
 առաջի զիւգերում զանլամ զաղթականներին
 աւանդելն իւրաքանչիւր հոգու մէկ եւ կէս պուղ

ալիւր: Իւրաքանչիւր գիւղի տանուտէր պարտաւոր էր աղբաւ գողթականների ցուցակը ներկայացնել՝ ալիւրը ստանալու համար, սակայն կայացնել անհրաժեշտ անբարեխիղճ տանուտէրեր, որոնք գողթականների փողեր էին կորզել ալիւր տալու համար. դրանց խորհրդակցութիւնը բացվեց և փողերը յետ ստացվեցան: Այս տարի ցանքը Շիրակում առհասարակ լաւ է և ալիւր հունձ է խոտանում: Կենսական պիտոյների առատութիւն և էփանդութիւն է. ցորենի ստաւը—28 պուր, արփէ 11 րուրի, կարագ իւղը—7 ր., պանիրը—2 ր. 40 կոպէկ:

ՁԱՒԱՆՈՂԱՅԻՆ մեզ դուռն են. Շիրակի միջիններին կարկուտ եկաւ, անցկացաւ թեթևակի կերպով Պրիվոյնի, Լեւոն, Ագաբակի գիւղերի վրայով և կանգ առաւ Կուրդանու վրա՝ թափելով իր բոլոր թոյնը նրա գլխին: Նրա տուած վնասի մասին մի դաղափար կազմելու համար պահանջ է ստել, որ խոտհարները անգամ պիտի անհունձ մնան, ուր մնաց հացահատիկները: Կարկուտը այնքան սաստիկ էր, որ բակերը թիկնով էին քերում: Հեղեղեց շատ տեղեր. հեղեղին զոճ դնացին անասուններ, և զրանց հետ էլ 18 հատ էլ, որ սեւաւը քնել էր մի անգից: Վնասի մասին այսօր կարելի է ասել, որ 150 տուն ունեցող մի գիւղ ոչ միայն զրկւում է իր աշխատանքի արդիւնքից, այլ և սերմացուից և հասարակ յարգեց:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՁԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Վանից մեզ դուռն են մայիսի 28-ից. Շիրակի ընդհանուր կացութիւնը տարբերութիւն մը կրած չէ վերջին ամիսների մէջ. միայն պարբերական պահիքներ են, որ կը պատահին և տէր-րորական վիճակը կայ ու կայ: Երկու քիչ ու շատ բարեկամացած ազգերու յարաբերութիւնները դարձեալ լարուած են չորհրդի այն յիմարական լուրերուն, որ այստեղի անգլիական փոխ-հիւպատոս Պարսկաստանէն հաղորդած է տեղույն կառավարութեան:

Ձորերի տակաւ կը մեկնին զէպի պարսկական սահմանադրուի և Բաղէյ—սահմանադրութիւն այնպիսի համարված Փէ Դաւիթի և Բու հանատակութիւններն ի դերն են հանելու, և Բաղէյ պատկերու մօտակցի քերդերն, որ կ'այժմէ կ'ամ մը, ալ ալ էյի մը և թաւուր-աղասի մը խողխողած են: Բոլոր հայեր և քերդեր (հիններն իսկ) իրենց տեղեր դարձուցուցան, այժմ մեր քաղաքին մէջ գրեթէ գաղթական չերկիր: Պարսկաստանէն 300 եզներ բերուելով բաշխուցան հայ երկրագործներուն: Մէջ չափ ցորեն 30—35 զուրուկ էր ծախուով Առևտուր կենդանի է. երկրագործը ձանկով իսկ հողը կը հերկէ ու կը ցանէ քաւ-ճար ընելով: Մեր նոր փոխ-կուսակալ Ֆէրից Շէմսի - փաշան արդարութեամբ կը վարուի: Ցառակաւ երկիրը բաւական չունի ասած է, միայն սրտատուրի դեպքանական խորհրդի վերջին պատգամին կը պատէ, բաւական է, որ նոր պատերազմի կասկած չը թողու...:

ՎԱՐՍՈՒՆԱՄԵԱՅ ԶՈՐԵԼԵԱՆ

VI

Մենք նշանակեցինք վիկտորիայի չրջանի ամենախոշոր սնցքերը: Այժմ դիմենք ընդհանուր եղրակացութեան և զրանով վերջացնենք մեր տեսութիւնը:

Վիկտորիայի թագաւորութիւնը գէոքրաֆիկ տիրապետութեան չրջանն է: Արիստոկրատիան յետ քաջվեց, տեղի տալով կատարեալ ժողովրդական կառավարութեան: Համայնքներ ժողովրդը, ընտրողական ընդհանուր իրաւունքի չորհրդի, ներկայացնում է անգլիական ազգը, այս հասկացողութեան ամենալայն մտքով. նա իւրացրել է օրէնսդրական նախաձեռնութիւնը, և միևնույնիստ ալ եւ թագաւորող անձի օգնականները չեն, այլ համայնքների ժողովի համար կատարում են գործադիր մարմնի պաշտօնը: Բայց չէ կարելի ասել թէ գէոքրաֆիկ տիրապետութիւնը վերջնականապէս հաստատված է: Անգլիայի հնաւանդ սովորութիւնների մի մասը դեռ մնում է. դեռ գոյութիւն ունի լորդերի պալատը, որ ազնուականութեան յետա-

բանն է և երբեմն կարողանում է ոչնչացնել այն, ինչ մտցնել է ուզում համայնքների ժողովը: Բայց այդ հնազարեան հիմնարկութիւնն էլ, ինչպէս երևում է. երկար չի դիմանալ: Գէոքրաֆիկ բացարձակ տիրապետութիւնը այնքան յաղթական հռոմեք է կազմել, որ հնուէ չէ այն ժամանակը, երբ արիւնի ազնուութիւնը տիրելու իրաւունքից կը զրկվի: Վիկտորիայի թագաւորութեան վերջին տարիներում արդէն կը սկսէր հրատարակված լորդերի պալատի ղեմ. ազատամիտ կուսակցութիւնը ազնուականների ալը բռնապետութիւնն էլ կը տապալէ կարծիքից: Իսկ թագաւորական տունը, ինչպէս տեսանք, հնուէ է մնում վարչական գործերից: Վիկտորիա թագուհին վաթսու տարվայ ընթացքում հաստատեց, որ բոլորովին ճիշդ է ասված սահմանադրական կառավարութիւնների մասին. «Թագաւորը չէ կառավարում, այլ թագաւորում է»:

Գէոքրաֆիկ տիրապետութիւնը այժմ էլ գտնվում է իր աստիճանաբար զարգացման շրջանում: Ի նկատի առնելով, որ Անգլիայում հասարակական և պետական կարգերի փոխարկութիւնը կատարվում է դանդաղ, առանց բռնաւթիւնների, օրինականութեան ճանապարհով, այժմ է երկադրել, որ աշխարհը դեռ երկար ժամանակ ակնատես կը լինի անգլիական գէոքրաֆիկ տիրապետութեան մարտահրաշխան և քայլ առ քայլ նուաճումներին: Բայց թէ ապագան նրան է պատկանում, այդ անուշադալ է. Գէոքրաֆիկ տիրապետութեան գոյութիւնը զուրա գալիս ազատամիտ կուսակցութիւնը, իսկ մենք արդէն գիտենք, որ Անգլիայի այժմեան անտեսական, մտաւոր և քաղաքական ուկեղաբը լոկ ազատամիտ կուսակցութեան քանքերով է ստեղծվել:

Եւ այսպէս, վիկտորիայի շրջանում անգլիական բուն ժողովրդը իր երկրի, իր գործերի տակը դարձաւ Ազատ կարգերի ստեղծելով, նա կարողացաւ ամենքի համար նախաձեռնել բարգաւաճման համեմէ: Ամեն ինչ նպատակ էր այդ ընդունակ ժողովրդին. նոյն իսկ իրանդական կուսակցութիւնը, որ վարում էր իր դարաւոր դատը, իբրեւ ընդդիմադիր կողմ, իբրեւ բողոք և պահանջ, միշտ նպատակ էր այն կուսին, որ գէոքրաֆիկ մղում էր ազնուականութեան ղեմ: Հիւսիսային Անգլիան, Շոտլանդիան, ուր անգլիական եկեղեցին չէ տիրում, նոյնպէս օգնեցին առաջադիմութեան մեծ գործին: Անգլիան վարդապետ յայտնելով և մեծ ակնկալութիւններով դիմում է զէպի ապագան:

Այսօր, ներքին կեանքի մէջ, այն հարցերի վերաբերմամբ, որոնք բուն անգլիացու կեանքին ու շահերին են ծառայում: Անգլիացու բարոյութեան ճանապարհը փչերից ու խոչնդոտներից ազատ է իսկ դրսում, այն լայնարձակ հրապարակում, ուր անգլիացին չիվում է ուրիշ ազգերի հետ, դուրսից, ինչպէս տեսանք, բոլորովին ալ կերպարանք է ներկայացնում: Այդ տեղ անգլիացին, գիւղում իր գիտութեամբ, իր ստեղծագործող հանձնարով, արդէն մի անհոգի հարստահարող է, որ ճշմութեամբ է ստրկացնել բոլոր այն ազգերը, որոնք անգլիական տիրապետութիւն չեն ճանաչում: Վիկտորիայի վաթսու տնամեայ թագի վրա այժմ չէ փայլում ոչ մի հարստաւորված, խեղճ ազգի ազատութեան գոհարը. դրա փոխարէն Անգլիայի պատմութիւնը ունի էջեր, որոնք յաւիտեան սկզբ մնան: Բընորդ է որ անգլիական ժողովրդի մէջ արտաքին գործերի վերաբերմամբ հաստատ է մնում հին պահպանողական սկզբունքը: Գուցէ դրա պատճառն այն է, որ անգլիացու աշխարհը դեռ սաղմնային դրութեան մէջ է գտնվում, և նա բացի իր անձնական բարեկեցութիւնից չէ սիրում ուրիշ, վերացական ձգտումներ: Բայց ինչ էլ լինի, անգլիական կառավարութիւնը, ներքին հարցերի մէջ կորցնելով իր veto-ի իրաւունքը, արտաքին քաղաքականութեան մէջ շարունակում է միապետական իրաւունքների վայելել. նա նոյն իսկ անտես է առնում իր ժողովրդի կարծիքներն ու ցանկութիւնները, և ուշադրութիւն չէ դարձնում բողոքների, պահանջների վրա: Այսպէս էր 1876 թականին, բոլոր դարական գաղափարների ժամանակ, այսպէս է և այժմ:

Թէ սրան անգլիացին կուրանում է արտաքին գործերի վերաբերմամբ իր ունեցած պահպանողական և շահագիտական ձգտումների մէջ,

այդ երևում է նրանից, որ Գլազգոսի պալատում մարդը իր գործունէութեան ընթացքում համակրութիւն չէ գտել ամեն անգամ, երբ փորձել է արտաքին քաղաքականութեան մէջ հիմք ընդունել ոչ թէ անգլիական, այլ չափերը, այլ ընդհանուր մարդկութեան, միջազգային իրաւունքի և արդարութեան պահանջները:

Կարճ ասած, Անգլիան գեղեցիկ ու բարգաւաճ է իր համար: Վիկտորիան, իբրեւ պաշտօնական ներկայացուցիչ մի երկար շրջանի, իրաւունք ունի հպարտութեամբ յետ նայել, տեսնել իր հըպատակների երջանկութիւնը և վայելել բոլոր անգլիացիների սէրն ու համակրանքը: Անգլիան Անգլիայի համար—դա ժամանակակից պատմութեան հրաշքն է: Բայց միայն այդ սահմանում, դրանից աւել փառք չունի...:

Լ.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՅ

Թաւրիզ, յունիսի 1-ին

Գլազգոսի տարեշրջանը վերջանում է. տարեկան հարցաքննութիւններն այս տարի սկսվել են մայիսի 23-ից. այս մասին երկար գրելու կարիք չը կայ, որովհետեւ ինչպէս տարեշրջանի հէնց սկզբում գրել էի, այս տարի ունենք մի քանի այնպիսի ուսուցիչներ, որոնց համար մեր Գ. դատարանի աշակերտները կարող են ուսուցչութիւն անել:

«Տարին մի քաղի, այն էլ նաւակառիք». իրաւ, հազիւ խեղճ պարսկաշայը պիտի արժանանար իր անկալած առաջնորդին, այն էլ հանդիպեց արդեւներին. այդ պատճառով էլ այժմ մեր հասարակութեան մեծամասնութիւնը շատ վշտացած է. սակայն դարձեալ յոյս կայ, որ խորէն երկրակալուը կաշխատի անցնել Արդարական և ստանձնել իր նոր թեմի գործերը: Այս վերջին օրերում կայծակի երկու թունդ հարուածներից թաւրիզի մէջ սպանվել են մի քանի թուրքեր, ասում են, որ 8 հոգի են ըսպանվողները:

Լուր է պատում, որ Թաւրիզի մի գունդ սպառազինված քրդեր յարձակվել են խոյի և Սալմաստի վրա՝ թալանելու նպատակով. հետեւանքի մասին առ այժմ ոչինչ յայտնի չէ: Եթէ այդ լուրը ճշդվի, այն ժամանակ արդէն պարզ է, որ սուլթանը Համիդը երեք անգից չէ թողնում իր հարեան պետութեան քրիստոնեաներին և որ վերջերս Պարսկաստանի դաւադան կողմի խռովութիւններն ընդհանրապէս և թաւրիզի վերջին դէպքերը մասնաւորապէս՝ եղել են և լինում են նոյն իսկ թուրքաց ապստամբի շարժիւ:

Այս օրերս լսեցինք, որ Պարսկաստանի միակ պարբերական լրագիրը՝ «Շահիդ» շաբաթականը թէ զազարել է նիւթական անկարգութեան պատճառով, ի նախապէս պարսկաշայերի, որ չը կարողացան մի փոքրիկ թերթ անգամ պահպանել:

Երբ ամեն տեղ, ամեն ազգի մէջ խոսում, դուռն են հայկական աղետների մասին, ինչպէս մի հայ՝ Նշիկ երէց (ծածկանուն) էլ չը փորձէ այդ անել. և ասա այս օրերս այստեղի ազգային տպարանից (Փառք Աստուծոյ) լոյս ընծայեց 60 փոքրիկ երեսներէից բաղկացած մի գրքովի գրված ամբողջովին ստանաւորներով: Գրքովը կրում է «Ճառագայթ» բանաստեղծական մէջ (?) վերնագիրը, գրեց Նշիկ երէց. և նուրբված է թաւրիզից հանցուցեալ օր. Էմմա Ամատունիանցին: Գրողը, Նշիկ երէց, վանեցի է և պատած լինելով Հայաստանի մի քանի տեղերում, այժմ փորձել է մի քանի նկարագրութիւններ առաջ բերել հայկական աղետներից բանաստեղծութիւն և այդ բանը նա մի կերպ գլուխ է բերել, սակայն պէտք է նկատել, որ ամբողջ գրքովի մէջ բոլորովին բացակայում է գեղարուեստը: Գրքովի գրին է 1 զուտ (կամ ուսուց 20 կողմէ):

Արշակունի

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Եւրոպական մեծ պետութիւնների ծովային զորութեան մասին մի գաղափար տալու համար, «Daily Chronicle» լրագիրը հետեւեալ վիճակագրական տեղեկութիւններն է առաջ բերում: Մեծ Բրիտանիան 38 մեծ զբաղաւորներ ունի

(473.000 տոնն) և 118 կրէյսեր (568.000 տոնն): Իսկ մնացած չորս մեծ պետութիւնները—Ռուսաստանը, Ֆրանսիան, Իտալիան և Գերմանիան միասին 103 զբաղաւոր (1.075.000 տոնն) և 209 կրէյսեր (976.000 տ.) ունեն: Ռուսաստանն ունի 17 զբաղաւոր և 12 կրէյսեր, Իտալիան—9 զբաղաւոր և 20 կրէյսեր, Գերմանիան—14 զբաղաւոր և 14 կրէյսեր, իսկ Ֆրանսիան—25 զբաղաւոր և 45 կրէյսեր:

—«Indépendance Belge» լրագիրը հաղորդում է, որ սուլթանը ստացել է Վիլհէլմ կայսրից մի հեռագիր, որի մէջ նրան ցոյց է տրվում թէ սուլթան թողնելու անհրաժեշտութիւնը:

—Լոնդոնից հեռագրում են, որ թագուհու յօրեկանի առթիւ Գլազգոսի մի ճաշ է տուել աղքատ ծերերին և ուսանողներին և առաջարկել է բաժակ թագուհու կենացը, իբրեւ օրինակելի վեհապետի և կնոջ կենացը:

—Վիեննայից հաղորդում են «Indépendance Belge» լրագիրն, որ այլանցիները ամեն տեսակ բռնութիւններ են գործում թէսալիայում: Էդհէմ-փաշան հեռագրում է, որ 4.000 ալբանացիներ, կանոնաւոր և անկանոն զորքեր պատկանող, հրաժարվում են իրանց զէնքերը յանձնել, յայտնելով, որ զինաթափ կը լինեն այն ժամանակ, երբ կը ստորագրվի դաշնագիր թէ թէսալիան թողնվում է Թուրքիային:

—«Berliner Tageblatt» լրագիրն հեռագրում են Կ. Պոլսից, որ Խզէթ-բէյ նորից ընկել է սուլթանի աչքից: Պալատում չովինխտ կուսակցութիւնը գերակշիռ դեր է խաղում: Մուր լուրեր են պտտում, որ Հայաստանը և Պարսկաստանը նոր դժուարութիւններ են պատրաստում Բ. Գրան համար. բողոքական սահմանից նոյնպէս յուզիչ լուրեր են հասնում: Այդտեղ, ըստ երևոյթին, կուեւու միտք ունեն: Կրեւտէում բրիտանական զինուորական ոյժերի աւելացնելուց երեսու է, որ կղզին կարող է Զօն-Բուլի ձեռքն անցնել:

—«Times» լրագրի վիեննայի թղթակիցը ասում է, որ Բ. Գրանը, ի նկատի ունենալով պետութիւնների համերաշխութիւնը, սկսում է, ըստ երևոյթին, հասկանալ, թէ պէտք է իր ծրագրից հանել թէսալիան միացնելու: Միտքը: Բացի դրանից Լոնդոնի լրագիրները տպեցին Կ. Պոլսից ստացված մի հեռագիր, որի մէջ ասված է, թէ սուլթանը նշանակեց հինգ բարձրաստիճան պաշտօնեայ բրիտանականներ, որոնք որպէս Բ. Գրանի ներկայացուցիչներ՝ Վիկտորիա թագուհու յօրեկանի օրը պէտք է ներկայ լինեն հանդիսաւոր մաղթանքին բրիտանական դեսպանութեան մատուռի մէջ, Կ. Պոլսում:

ԻԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Բանից դուրս է գտնի, որ շատ հարուստ լինելն էլ վտանգաւոր է, մասնաւորապէս այն մարդկանց համար, որոնք աղքատութիւնից յանկարծ, կայր բաղդի բերմամբ, չափազանց հարստանում են և չը կարողանալով գիտնալ այդ երջանկութեան, խեղճ կորցնում են: Նորերս հեռագիրը հաղորդեց, որ Բօրնաստոն ինքնասպանութիւն է գործել: Շատերը չը գիտեն ո՞վ է Բօրնաստոն, բայց արտասահմանում նրա հռչակը այնքան մեծ է, ինչպէս և Բօտիլիդի: Բօրնաստոն հսկայական կարողութեան տէր մի անձն էր. նա ունէր 800 միլիոն ֆրանկ հարստութիւն: 24 տարի առաջ նա մի գրոյ չունէր և Լոնդոնից գնացել էր Կապտան, Բարեյուսայ հրուանդանի մօտ գրանվել մի երկրի, իբրեւ կլոսուն—ձեռնածու: Եւ ասա կլոսունը պատահմամբ գտնում է այդ երկրում ոսկու և աղամանդի հանքեր և 24 տարվայ ընթացքում գտնում է աշխարհիս ամենահարուստ մարդը: Արգեստիւնների արչաւանքից ի վեր մարդիկ օրնում են ոսկի գեղմը—այն մշանջնական իրէպը, որին ձգտում են ամենքը: Բօրնաստոն գտաւ այդ գեղմը, նա դարձաւ ոսկու հերոսը, բայց յանկարծ, անցնել տարի, հերոսը կորցրեց իր հարստութեան մի մասը—300 միլիոն ֆրանկ և այդ կորուստը այնքան վատ ազդեց ոսկեպաշտ կլոսունի վրա, որ չը կարողացաւ դիմանալ և ինքնասպանութիւն գործեց: Բայց արդեօք մի և նայն չէ, եթէ մի մարդ ունի 800 կամ 500 միլիոն ֆրանկ, մի և նայն չէ, եթէ մի մարդ օրեկան ստանում է եկամուտ 100 000 ֆրանկ, թէ 80.000, կամ իւրաքանչիւր ժամը 5000 ֆրանկ: Բայց մարդկային ազահութիւնը միթէ չափ ու սահման ունի:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՅ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՕՆԻՍԻ. 17 յունիսի: Թագուհին, ուղեկցու

3—4